

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԵՐԶՆԿԱՅԻ¹ 1230 Թ. ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԿԻՒԿԵՑԻՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1230 թվականին Երզնկայի (կամ Յասի Զիմենի) ճակատամարտում փոքրասիական սելջուկների ու Այյուբյանների միացյալ զինուժը վերջնականապես ջախջախեց շուրջ վեց տարի տարածաշրջանը սարսափի մեջ պահող Զալալ ալ-Դինի խորեզմյան բանակը: Վերջինիս հաղթանակի դեպքում նվաճման վտանգի առաջ էին կանգնելու Այյուբյանների տիրույթները Զազիրայում (Վերին Միջագետք) Մոսուլ կենտրոնով և Վանա լճի ավազանում՝ Խլաթ կենտրոնով:

Այյուբյան պետությունը փաստորեն մի շարք պետությունների «համադաշնություն» էր, որի մեջ հատկապես խոշոր միավորներ էին 3-4-ը, իսկ սրանց մեջ գերազահ էր համարվում Եգիպտոսի սուլթանը, թեև դա էլ երբեմն ձևական բնույթ էր կրում: Դամասկոսը, Հալեպը, Համան, Հոմսը, Մոսուլը կամ Խլաթը ուղիղ ձևով Կահիրեին չէին ենթարկվում, թեև այս բոլոր քաղաքներում իշխում էին Այյուբյան տոհմի ներկայացուցիչները: Նշենք նաև որ քննարկվող ժամանակաշրջանում Հալեպը և Հյուսիսային Սիրիան գտնվում էին Մոսուլի ալ-Աշրաֆի հովանավորության տակ:

1225-ին, երբ Զալալ ալ-Դինը հայտնվեց տարածաշրջանի սահմանագլխին Այյուբյան եղբայրները գրեթե ինչպես միշտ գտնվում էին ներքին պայքարների մեջ: Այս հակասություններից փորձեց օգտվել խորեզմի թագաժառանգը: Զալալ ալ-Դինի և Դամասկոսի տեր ալ-Մուազզամի միջև կնքվեց դաշինք ընդդեմ Զազիրայի և Վանա լճի ավազանի տեր ալ-Աշրաֆի: Այս դաշինքին մասնակցող Իրբիլի տեր Արտուխյան Գյոքբորնին, ըստ նախատեսված պլանի պիտի հարձակվեր Մոսուլի վրա, ալ-Մուազզամը՝ Հոմսի ու Համայի, իսկ Զալալ ալ-Դինը՝ Խլաթի ու Վանա լճի ողջ ավազանի վրա²:

Զալալ ալ-Դինն ու իր դաշնակիցները իրենց նվաճողական պլանների իրագործմանն անցան շուրջ մեկուկես տարի անց միայն, քանի որ 1225-1226 թվականներին Զալալ ալ-Դինը ամբողջովին զբաղված էր Վրացական պետու-

¹ Այս ճակատամարտը առավել հայտնի է Յասի Զիմենի ճակատամարտ անունով, որը մի գյուղ է Երզնկայի մոտակայքում: Մենք հետևել ենք ֆրանսիացի նշանավոր արևելագետ Ռենե Գրոսսեին, որն այն կոչել է «Երզնկայի ճակատամարտ», տե՛ս René Grousset, *Histoire des Croisades et royaume franc de Jerusalem*, v.III, 2006 (1936,1991),pp.382-383 (այսուհետև R. Grousset).

² Stephen Hemphreys, *From Saladin to the Mongols, The Ayyubids of Damascus, 1193-1260*, New York, 1977, p.176-178 (այսուհետև Stephen Hemphreys).

թյան դեմ արշավանքներով ու ասպատակություններով: Այդ ընթացքում նա Գառնիի (1225) բախտորոշ ճակատամարտում հաղթանակ տարավ և 1226-ի սկզբին գրավեց մայրաքաղաք Թբիլիսին, այդ ընթացքում նաև ավարառություն էնթարկելով Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր³:

1226 թ. նոյեմբերին Ջալալ ալ-Դինը անսպասելի հայտնվեց հլաթի մոտ: Խորեզմցիները հասան որոշակի հաջողության, բայց ի վերջո սաստիկ ցուրտն ու Ատրպատականից ստացած տագնապալի լուրերը ստիպեցին նրանց հեռանալ հլաթից⁴:

Դրանից հետո շուրջ երկու տարի (1226-ի վերջից մինչև 1228-ի երկրորդ կեսը) Ջալալ ալ-Դինը գտնվում էր Իրանում և Իրաքում: Այդ ընթացքում Դամասկոսի տեր Այուբյան ալ-Մուազզամը հիվանդացավ ու մահացավ 47 տարեկան հասակում: Դրանով իսկ Ջալալ ալ-Դինը կորցրեց իր գլխավոր դաշնակցին տարածաշրջանում:

Իսֆահանում մոնղոլների դեմ տարած իր հաղթանակից հետո Ջալալ ալ-Դինը կրկին հայտնվեց Փոքր Ասիայում և 1229 թ. խորեզմցիները դարձան Այուբյանների գլխավոր մտահոգությունը արտաքին հարաբերություններում⁵:

Թեև ժամանակակիցներն ու պատմագիրները Ջալալ ալ-Դինին համարում են մի բախտախնդիր⁶, իսկ նրա բոլոր արշավանքները բնորոշում որպես կողոպտչական, սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ 1225-1230 թվականներին գրեթե ողջ Իրանն ու Վրացական թագավորությունը (Հյուսիսային Հայաստանի հետ միասին) գտնվում էին Ջալալ ալ-Դինի տիրապետության տակ: Նույն ճակատագիրն էր սպասում նաև Հարավ-արևմտյան Հայաստանին, Ջաղիրային, Ասորիքին (Այուբյան տիրույթներ), Փոքր Ասիային (Իկոնիայի սելջուկյան սուլթանություն), ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորությունն ու խաչակրաց տիրույթներին:

1229թ. օգոստոսի վերջին Ջալալ ալ-Դինը անսպասելի հայտնվեց հլաթի պարիսպների տակ իր հետ բերելով պաշարողական մեքենաներ: Խլաթի գրավումը այս անգամ ևս շատ դժվար խնդիր դարձավ նրա համար: Քաղաքը

³ Հ. Մարգարյան, «Ջալալ ալ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի պատմության շուրջ». - Պատմաբանասիրական հանդես, եր., 1981, 4, էջ 125-139:

⁴ Նույն տեղում:

⁵ Ռեմե Գրուսե վկայակոչելով լատին պատմիչների տեղեկությունները եզրակացնում է որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժման վտանգը այնքան մեծ էր, որ երկու Այուբյան եղբայրները՝ ալ-Քամիլը և ալ-Աշրաֆը դիմեցին անգամ Ֆրիդրիխ II կայսրի օգնությանը: (Տե՛ս R. Grousset, p. 382).

⁶ Առաջին հերթին այն պատճառով, որ նա թեև ուներ շատ մարտունակ մի բանակ, բայց կորցրել էր իր երկիրն ու պետությունը, հետևաբար ավելի նման էր թափառական ավազակի, քան մի մեծ պետության ղեկավարի, որը նվաճումներով ընդարձակում է իր տիրապետությունը (Վ. Տ.-Ղ.):

դիմացավ գրեթե 10 ամիս, բայց ի վերջո 1230 թ. ապրիլի 14-ին խորեզմցիները գրոհեցին պարիսպների վրա և մի աշտարակից կարողացան ներխուժել քաղաք: Խլաթի անկումը ծանր հարված էր Այյուբյանների համար:

Փաստորեն 1230 թվականի գարնանը արդեն Զալալ ալ-Դինը ի վիճակի էր կատարելու նոր լայնածավալ նվաճումներ: Իրավիճակը ստիպեց տարածաշրջանի պետություններին սթափվելու և կտրուկ քայլերի դիմելու մի կողմ դնելով նախկինում եղած հակասությունները: Խլաթի անկումը Այյուբյաններից ոչ պակաս անհանգստացրել էր Իկոնիայի սուլթան Քալ Կուբադին, որը որոշեց հարթել իր բոլոր հակասությունները Այյուբյանների հետ: Նա անմիջապես բանագնացներ ուղարկեց Եգիպտոսի ալ-Քամիլի և Զազիրայի ալ-Աշրաֆի մոտ, որի արդյունքում մի դաշինք գոյացավ սելջուկների և Այյուբյանների միջև: Ալ-Քամիլը Ալ-Աշրաֆին նշանակեց բոլոր այյուբյան զորքերի հրամանատար⁷:

Ալ-Աշրաֆը սկզբում իր հետ ուներ ընդամենը 700 զինվոր որ բերել էր Դամասկոսից: Նրան միացան Հալեպի, Հոմսի, Համալի, Դիյար Մուգարի, Մոսուլի և այլ ուժեր: Ի վերջո զորքը հասավ 5000-ի: Խառնանի մոտ բանակ կազմելով ալ-Աշրաֆը Եփրատի հովտով գնաց դեպի Սեբաստիա որտեղ միացավ Քալ Կուբադի 20000 —անոց հեծելազորին⁸:

Երբ Զալալ ալ-Դինը լսեց իր դեմ ստեղծված զինակցության մասին նա փորձեց հարվածել սելջուկներին նախքան նրանց միանալը ալ-Աշրաֆի հետ: Բայց Խարբերդի մոտ նա անսպասելի հիվանդացավ ու թեև մի քանի օրից ստիպեց իրեն շարունակել առաջխաղացումը, բայց արդեն պահը կորցրել էր: 1230 թ. օգոստոս 7 -ին Խարբերդից Երզնկա ուղղվելով Զալալ ալ-Դինը դեմ հանդիման դուրս եկավ սելջուկների 6000-անոց⁹ մի զորաբանակի: Վերջիններս հանկարծակիի գալով այդ օրը չախշախիչ պարտություն կրեցին: Բայց սա ընդամենը նախերգանքն էր:

1230 թ. օգոստոս 9 —ին, Երզնկայի մոտ գտնվող Յասի-Չիմեն գյուղի մոտ Զալալ ալ-Դինը հանդիպեց դաշնակիցների հիմնական ուժերին: Եթե հավաստի է Բար Հեբրեոսի հիշատակած թիվը ապա Զալալ ալ-Դինը ուներ թվական գերազանցություն՝ 40 հազարն¹⁰ ընդդեմ 25 հազարի: Նրա առաջապահները ուժեղ հարձակման ենթարկվեցին սելջուկ-այյուբյան բանակի կազմում կռվող բեգունիների կողմից: Հաջորդ օրը խորեզմցիները քիչ էր մնում գրավեին այն բլուրը, որի վրա դաշնակիցները տեղավորել էին իրենց ուժերը, բայց հանկարծ ինչ որ մի քամի մեծ փոշի առաջացրեց, որի հետևանքով նրանք միմյանց

⁷ Stephen Hemphreys, p.217-218

⁸ Նույն տեղում:

⁹ Ըստ Բար Հեբրեոսի սելջուկների թիվը 4000 էր: (*The Chronography of Gregory Abu'l-Faraj Bar Hebraeus*, eng. tr. **Ernert A. Wallis Budge**, Amsterdam, 1976, p.395, այսուհետև Bar Hebraeus).

¹⁰ Նույն տեղում:

տեսադաշտից անհետացան: Ըստ երևույթին Ջալալ ալ-Դինի հիվանդ լինելը ևս ինչ որ դեր խաղաց: Ի վերջո խորեզմյաններն սկսեցին նահանջել: Ապա նահանջը վերածվեց փախուստի և Այյուբյանների ու սելջուկների հեծելազորը նետվեց խորեզմյանների հետևից վերջնականապես ջախջախելով նրանց: Ջալալ ալ-Դինը մի կերպ փրկվեց փախչելով Խլաթ, ապա հասնելով մինչև Խոյ¹¹:

Երզնկայի ճակատամարտի մասին հիշատակող արաբական¹² և ասորական¹³ աղբյուրներից և ոչ մեկը չի հիշատակում հայերի և ֆրանկների մասնակցության մասին: Ուստի բացառիկ են 13-րդ դարի երկու հայ հեղինակների տեղեկությունները:

Եզակի է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, Հայոց Պատմության այն գլխում որ կոչվում է «Վասն կորստեան սուլտանին Ջալալադինի եւ բառնալոյ նորա յերկէ»: Համաձայն այդ հաղորդման Երզնկայի ճակատամարտին բացի սելջուկներից ու Այյուբյաններից մասնակցել են նաև հայերն ու խաչակիրները: Նկարագրելով Խլաթի պաշարումն ու գրավումը խորեզմյանների կողմից, պատմիչը հիշատակում է երեք սուլթանների՝ Քամիլ և Աշրաֆ Այյուբյանների և Իկոնիայի Քալ Կուբադի զինակցությունն ընդդեմ Ջալալ ալ-Դինի, ապա ավելացնում է. «Կոչեցին իւրեանց օգնական և ի զօրացն հայոց, որ յաշխարհին Կիլիկեցւոց, և ի ֆռանկացն ծովեզերեաց, և եկին տալ պատերազմ ընդ խորագմեցւոյն Ջալալադինի»¹⁴: Ապա նկարագրում է Երզնկայի ճակատամարտը հետևյալ կերպ. «Եւ իբրեւ եկին մօտ առ միմեանս, զանգիտեցին երկոքին կողմանքն և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս: Ապա քրիստոնեայքն, որ ի հայոց և ֆռանկաց, խրախուսեալք յԱստուած, դիմեցին ի վերայ նոցա: Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի, և զօրութեամբն Քրիստոսի հարին զզօրսն և ի փախուստ դարձուցին: Եւ զայն տեսեալ զօրացն տաճկաց՝ յարձակեցան և նոքա. և հարին կոտորեցին զբազումս մինչ ի մուտս արևուն: Ապա հրաման ետուն սուլտանքն ոչ պնդել զհետ փախստէիցն, իբր այն թէ հաւատակիցք նոցա իցեն: Եւ դադարեցին ի պնդելոյ զհետ նոցա: Իսկ սուլտանքն զի արք բարեպաշտք էին, ոչ ապերախտ լինէին առ զօրն քրիստոնէից, զի գիտացին, թէ ի ձեռն նոցա ետ տէր զյաղթութիւնն»¹⁵:

Բացի Կիրակոս Գանձակեցուց նման տեղեկություն գտնում ենք նաև նրան

¹¹ Stephen Hemphreys, p.219.

¹² Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, пер. с арабск. З. М. Бунятова, Баку, 1973, стр.256-257, Ibn al-Athir, Al-Kamil fi l-Tarikh, t. X, Beirut, 2003, pp.486-487, տե՛ս նաև Ստար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Իրմ պ-Ասիւր, Եր., 1981, էջ 339-340 (այսուհետև՝ Իրմ պ-Ասիւր):

¹³ Bar Hebraeus, p. 395.

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 228-229:

¹⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 229-230:

ժամանակակից Անանուն Սեբաստացու տարեգրության (XIII դ.) մեջ¹⁶, ընդ որում երկու տարբերակով¹⁷:

Կիլիկիայի պատմության վաստակաշատ ուսումնասիրող Գրիգոր Միքայելյանը իր աշխատության մեջ անդրադառնալով այդ ճակատամարտին ամբողջովին հենվում է Կիրակոս Գանձակեցու տեղեկության վրա¹⁸: Միքայելյանը չի փորձում այլ աղբյուրներով հաստատել հայերի ու ֆրանկների մասնակցության հավաստիությունը, ինչպես նաև կռիվների մեջ մտնելու դրդապատճառները, զինվորների թիվը, ուժեր էին նրանց հրամանատարներն ու վերջապես ինչ ենք հասկանում ասելով «ծովեզրյա ֆրանկներ»:

Մի այլ վաստակաշատ կիլիկիագետ Քլոդ Մուլթաֆյանը նույնպես անդրադառնում է այս ճակատամարտին, ընդ որում նա բացի Կիրակոս Գանձակեցուց հղում է նաև Անանուն Սեբաստացու ժամանակագրությունը¹⁹:

Հուլյն պատմաբան Ալեքսիա Սավվիդիսը, նույն ճակատամարտը նկարագրում է հետևյալ կերպ «Անատոլիայի հյուսիս-արևելքի բախտը որոշող ճակատամարտը մղվեց ... Երզնկայից արևմուտք, Յասիլիմենի կանաչ դաշտում: Քայկուբադ I-ը դիվանագիտական հաղթանակ տարավ ընդունելով ալ-Քամիլի և ալ-Աշրաֆի օգնության առաջարկը, քանի որ հաղթանակի դեպքում նա կկարողանար իր պայմանները թելադրել Փոքր Ասիայի ապագա ստատուս քվոյի հարցերում: Կիլիկյան թագավոր Հեթում Ա-ը նույնպես ստիպված էր Կոնիային մատակարարել ֆրանկոհայկական մի զորամիավորում»²⁰:

Փորձենք պարզել թե Երզնկայի ճակատամարտին կիլիկեցիների մասնակցությունը որքանով էր հավանական և որքանով էր թելադրված հայոց թագավորության մինչ այդ վարած արտաքին քաղաքականությամբ:

Հայտնի է որ Կիլիկյան Հայաստանը Իկոնիայի սելջուկյան սուլթանության հանդեպ 1216-ից հետո ուներ որոշակի վասալական պարտավորություններ: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ մինչ այդ մշտապես հաղթական Լևոն Ա թագավորը իր սիրելի սպարապետ Կոստանդինին սելջուկյան գերությունից ազատելու համար թե տարածքային զիջումներ կատարեց և թե ընդունեց Իկոնիայի սուլթանի գերակայությունը, որն ըստ երևույթին ենթադրում էր նաև ռազմական ուժ տրամադրելու պարտավորություն:

¹⁶ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վազգեն Հակոբյան, Եր., 1956, էջ 118-172:

¹⁷ Նույն տեղում, էջ 138:

¹⁸ Գ. Микаэлян, История Киликийского армянского государства, Ер., 1952, с. 296: Մոտավորապես նույն միտքը կրկնվում է նաև Հայ ժողովրդի պատմության /ՀՀ ԳԱ բազմահատույակ / 3-րդ հատորի/, Եր., 1976/ 605 էջում / հեղ. Լ. Բաբայան/:

¹⁹ C. Moutafian, L'Armenie du Levant, t. I, Paris, 2012, p.127-128.

²⁰ Alexis G. C. Savvides, Byzantium in the Near East: Its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A. D. c.1192-1237, Thesalonics, 1981, p.181 (այսուհետև՝ Alexis G. C. Savvides).

Երեք տարի անց՝ 1219-ին նման առիթ ներկայացավ, ըստ Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն տարբերակի շարունակողի: Երբ սուլթան Քեյ-քաուսը արշավանքի դուրս եկավ ընդդեմ Հալեպի Այյուբյանների նա օգնական ուժեր ստացավ Հայոց թագավորից: Սելջուկները մի շարք բնակավայրեր գրավեցին Այյուբյաններից և արդեն սպառնում էին մայրաքաղաք Հալեպին: Հենց այդ ժամանակ Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլը օգնություն ստանալու համար նամակով դիմում է Լևոն թագավորին: Վերջինս հարևան պետությունն օգնելու նպատակով դիմում է խորամանկության: Նա իր հերթին մի այլ նամակ է ուղարկում Իկոնիայի սուլթանին հաղորդելով, որ իբրև թե տվյալներ ունի Սուլթանության ներսում ձևավորված դավադրության մասին: Այս լուրն առնելով սելջուկները վերադառնում են Իկոնիա՝ թողնելով նախապես գրավված բնակավայրերը: Դրանով իսկ ոչ միայն Հալեպն է փրկվում սելջուկյան հարձակումից, այլև ալ-Աշրաֆը ետ է խլում մինչ այդ կորցրած բնակավայրերը²¹:

Եթե մինչև 1216 թ. Հայոց թագավորության և Հալեպի Այյուբյանների միջև կային բավական լարված հարաբերություններ (գագաթնակետը 1203-1206 թթ. պատերազմն էր), ապա 1216-ից հետո բոլորովին այլ իրավիճակ է ստեղծվում: Այդ տարիներին Իկոնիայի սուլթանության աննախադեպ հզորացումը և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության հարձակողական պահվածքը հարևանների հանդեպ, Սահն ու Հալեպին դարձնում էին բնական դաշնակիցներ:

Սիւ-Հալեպ գինակցության մի նոր փաստ արձանագրվեց 1226-ին²²: Այն բանից հետո երբ Զաբելի հետ ամուսնանալով Հայոց թագավոր հռչակված Ֆիլիպին (1222-1224) Կիլիկիայի վերնախավը մեկուսացրեց ու բանտարկեց, ռազմական բախում տեղի ունեցավ Հայոց թագավորության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև: Ֆիլիպի հայրը՝ Բոհեմունդ IV-ը իր նպատակին չհասնելով փորձեց հակակիլիկյան մի դաշինք ստեղծել, հայոց դեմ գրգռելով Իկոնիայի սուլթանությանը: Վերջիններս 1225-1226-ի ձմռանը ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին չորս ամրոց, բայց ձյան ու ցրտի պատճառով վերադարձան իրենց երկիրը:

Ահա այստեղ է որ կրկին գործեց Սիւ-Հալեպ գինակցությունը, որի մասին պերճախոս կերպով վկայում է նույն Իբն ալ-Ասիրը: Կիլիկիայի փաստացի կառավարող Կոստանդին Պալլը նամակ ուղարկելով Հալեպ հուշեց, որ Բոհեմունդ IV-ի ուժեղացումը ձեռնառու չէ նաև Հալեպի Այյուբյանների համար: Ըստ արաբ պատմիչի «Հայերը լուր ուղարկեցին Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դինին՝

²¹ Տե՛ս Միխայելի պատրիարքի ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 520-522: Տե՛ս նաև Վահան Տեր-Ղևոնդյան, «Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Հալեպի սուլթանությունը՝ դաշնակիցներ», Հայոց պատմության հարցեր, 11, Եր., 2010, էջ 45-55:

²² Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 333, Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Եր., 1994, էջ 131-133:

օգնություն կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե բրինսը գրավի իրենց երկիրը, քանի որ Հալեպի գավառներին դրացի է»²³։ Աթաբեկը անմիջապես «գործ ու զենք» ուղարկեց հարևան երկիր։ Դրանից հետո թեև Բոհեմունդը անձամբ արշավեց Կիլիկիայի վրա, բայց ձախողվեց ու նահանջեց։ Փաստորեն Հալեպի օգնությունը վճռական նշանակություն ունեցավ խաչակիրներին ետ մղելու և շրջափակումից դուրս գալու գործում²⁴։

Ըստ երևույթին Իկոնիայի սելջուկներին օգնական զորք տրամադրելու պարտավորությունը գործել է ընդամենը մեկ անգամ 1219-ին Լևոն Ա թագավորի գահակալության վերջին ամիսներին, այն էլ փաստորեն ինչպես տեսանք՝ ոչ լիարժեք։ Ավելին, ինչպես տեսանք, վերջում այն ստացավ հակասելջուկյան բնույթ, Հայոց թագավորը պաշտպանեց Այյուբյաններին։ Այդ պարտավորության նշաններ ալլևս չեն երևում ոչ 1226-ին, ոչ էլ դրանից հետո մինչև 1230-ը։ Ուստի որևէ հիմք չկա Երզնկայի ճակատամարտին հայերի մասնակցությունը բացատրել Իկոնիայի սելջուկների հանդեպ վասալական պարտավորությամբ։ Իսկ եթե կիլիկեցիները արձագանքել են երկու հիմնական ուժերից որևէ մեկի կոչին՝ («կոչեցին իւրեանց օգնական») կամ առաջարկին, ապա դա մեծ հավանականությամբ Հալեպի Այյուբյաններն էին։

Իբն ալ-Ասիրը Երզնկայի ճակատամարտում հաղթանակի գործում կարևոր դեր է վերապահում Այյուբյանների զինուժին թեև այն քառակի զիջում էր սելջուկներին²⁵։ Այն որ անկախ իրենց թվից հենց Այյուբյաններն էին խորեզմցիների դեմ հիմնական կռիվները հաստատում է նաև ասորի պատմիչ Բար Հեբրեոսը ճակատամարտի նկարագրությունից հետո նշելով, որ «... և Մալիք Աշրաֆը հաղթական էր»²⁶։

Միաժամանակ Կիրակոս Գանձակեցին խոսելով հայերի ու ֆրանկների թվի մասին գրում է «Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի»։ Սա ենթադրել է տալիս որ նրանց թիվը միասնաբար հավանաբար հասնում էր մոտ 800-900-ի։ Հավանական է որ 25000-անոց բանակի մեջ այդքան զինվորը կարող էր նկատի չառնվել ժամանակի պատմագիրների կողմից, մանավանդ եթե որևէ միապետ, կամ նշանավոր իշխան նրանց չէր առաջնորդում։

Կիլիկեցիների հնարավոր մասնակցությունը քննելիս ավելորդ չէ նկատել, որ Երզնկայի ճակատամարտի ժամանակ, թեև Կիլիկիայի թագավորն էր Հեթում Ա-ը, սակայն իրականում երկրի ղեկավարն էր նրա հայրը՝ Կոստանդին Պալլը²⁷։

Միաժամանակ, թեև խորեզմցիների դեմ պայքարը Այյուբյանների կողմից

²³ Ibn al-Athir, Al-Kamil fi l-Tarikh, t. X, Beirut, 2003, pp. 469-470, Իբն ալ-Ասիր, էջ 333։

²⁴ Նույն տեղում, pp. 470։

²⁵ Իբն ալ-Ասիր, էջ 340։

²⁶ Bar Hebraeus, p. 395։

²⁷ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 286։

ղեկավարում էր Ջազիրայի տեր ալ-Աշրաֆը, սակայն նրա հովանավորության տակ գտնվող Հալեպում (և ողջ Հյուսիսային Սիրիայում) մինչև 1231-ը փաստացի ղեկավարն էր աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլը՝ Լևոնի Մեծագործի հետ համագործակցողը 1219-ին և Կոստանդին Պալլի դաշնակիցը 1226-ին, որը 1230-ին ևս կարող էր որոշակի դեր խաղալ Ջալալ ալ-Դինի դեմ կռավիցիայի մեջ կիլիկեցիներին ներգրավելու հարցում:

Այսպիսով 1216-ից հետո Սիս-Հալեպ հարաբերություններում տիրապետող է դառնում համագործակցությունն ու զինակցությունը: Վերջինիս վկայությունն են պատմիչների հաղորդումները 1219-ի և 1226-ի իրադարձությունների մասին: Այս շարքին կարելի է ավելացնել նաև 1230-ի Երզնկայի (Յասի Զիմենի) ճակատամարտը:

Այսպիսով ուրվագծվում է հետևյալ պատկերը: Թեև Երզնկայի ճակատամարտում թվական մեծ գերազանցություն ունեին Ռումի սելջուկները սակայն բուն ռազմական գործողություններում վճռական դեր են ունեցել Այուբյանները: Ըստ երևույթին, քրիստոնյաները մաս են կազմել հենց Այուբյան միացյալ զորաբանակի:

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը թեև չի հիշատակում քրիստոնյաների մասնակցության մասին, սակայն եթե մեր վերոհիշյալ ենթադրությունը (որ քրիստոնյաները ներառված էին Հալեպի Այուբյանների զորաբանակում) ճիշտ է, Իբն ալ-Ասիրի հաղորդումը չի հակասում Կիրակոս Գանձակեցու տեղեկությանը: XIII դարի արաբ պատմիչը նկարագրելով Երզնկայի ճակատամարտը գրում է «ճակատամարտն սկսեց Իզզ ալ-Դին Օմար իբն Ալին՝ Հալեբի զորքի գլուխն անցած: Ջալալ ալ-Դինը չկարողացավ դիմադրել կամ դիմանալ, այլ փախուստի դիմեցին ինքը և իր զորքը»²⁸:

Լուսաբանման կարիք ունի նաև ֆրանկների մասին հիշատակությունը, որոնք թե Կիրակոս Գանձակեցու և թե Անանուն Սեբաստացու մոտ հիշատակվում են հայերի հետ միասնաբար²⁹, որը նաև հուշում է որ սրանք մեկ միասնական զորամիավոր են եղել և չեն շեշտում թե դրա հատկապես որ մասն էին կազմում հայերը և որ մասը խաչակիրները: Մնում է պարզել թե հատկապես որ խաչակիրների մասին է խոսքը: Հույն պատմաբան Ալեքսիս Սավվիդիսի³⁰ արտահայտությունը այն տպավորությունն է ստեղծում որ «ֆրանկ» զինվորներին ոչ թե ինչ որ մի խաչակիր պետություն էր տրամադրել, այլ դրանք արդեն իսկ Կիլիկյան Հայաստանի տարածքում հաստատված խաչակիր ռազմիկներ են: Եթե դա ճիշտ է ապա մեծ հավանականությամբ դա կարող էին լինել

²⁸ Ibn al-Athir, *Al-Kamil fi l-Tarikh*, t. X, Beirut, 2003, pp. 487, տե՛ս նաև Իբն ալ-Ասիր, էջ 340:

²⁹ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 229-230:

³⁰ Alexis G. C. Savvides, p. 181.

հոգևոր-ասպետական միաբանությունների անդամներ, օրինակ Հիվանդախնամներ կամ Տևտոններ (ավելի քիչ հավանական է այդ ժամանակ Տաճարականների մասնակցությունը)³¹:

Հայտնի է որ XIII դարի առաջին չորս տասնամյակները համարվում են Իկոնիայի սելջուկյան սուլթանության հզորագույն շրջանը: Սակայն այդ քառասնամյակի մեջ պետք է առանձնացնել վերջին տասներեք տարին (1230-1243): Այդ ժամանակ սուլթանությունը հասավ հզորության գագաթնակետին իր ազդեցությունը տարածելով Փոքր Ասիայից էլ դուրս, դեպի Ասորիք, Վերին Միջագետք, Մեծ Հայքի հարավ-արևմուտք և Վրաստանի որոշ շրջաններ: Սա պայմանավորված էր հենց Երզնկայի հաղթանակով:

Ֆրանսիացի պատմաբան Կլոդ Կայենը գտնում է, որ խորեզմիցիների արշավանքներից ու Յասի Չիմենի ճակատամարտից հետո Իկոնիայի սելջուկների գերիշխանությունը Փոքր Ասիայում առավել ակնհայտ դարձավ: Նրանց բացահայտ հավակնությունները նաև Հարավ-արևմտյան Հայաստանի և Ջազիրայի հանդեպ ստիպեցին Այյուբյաններին կրկին միավորվել այս անգամ արդեն ոչ վաղ անցյալի դաշնակիցներին՝ փոքրասիական սելջուկների դեմ³²:

Ակնհայտ է որ 1230-ին Երզնկայի ճակատամարտը դրական նշանակություն ուներ նաև Կիլիկիայի համար, քանի որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժումը Հայոց թագավորությունից ներս մի իսկական աղետ կլիներ իր ծաղկուն շրջանը ապրող Կիլիկիայի համար: Մյուս կողմից պարզ էր որ խորեզմիցիների ահարկու բանակի ջախջախումից հետո շունենալով լուրջ մրցակից Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը փորձելու էր իր գերիշխանությունը տարածել հարևան երկրներում: Ստեղծված իրավիճակում Հեթում Ա-ը 13-րդ դ. 30-ական թթ. և 40-ականների սկզբին չէր կարող բացահայտ առճակատման գնալ և պետք է ողջամիտ համարել նրա կողմից Իկոնիայի գերիշխանության ժամանակավոր ընդունումը (որի արտահայտությունն էր միացյալ դրամների հատումը): Միաժամանակ ակնհայտ է, որ առաջին իսկ հարմար առիթի դեպքում կիլիկեցիները փորձելու էին թոթափել այդ կախվածությունը Իկոնիայից, մի բան որ մեծապես պայմանավորեց Հայոց թագավորության դիրքորոշումը մոնղոլների և սելջուկների հանդեպ Քյոսեդաղի (Չմանկատուկի) 1243-ի բախտորոշ ճակատամարտում և դրան հաջորդած եռանդուն դիվանագիտական քայլերը հայ-մոնղոլական դաշինք հաստատելու ուղղությամբ:

³¹ Մարի-Աննա Շեվալիե, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Եր., 2007, էջ 66-67:

³² Claude Cahen, *La Syrie du Nord a l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 645.

Vahan Ter-Ghevondian
About the Participation of Cilician Armenians in the Yerzinka Battle of 1230

The creation and development of the Armenian state in Cilicia approximately coincides with the epoch of Seldjuk and Mongol domination in the Middle East (XI-XIV cc.). During that period a number of decisive battles took place each of them defining the fate of local states for some decades.

The Yerzinka (or Yasi Chimen) battle of 1230 can be considered as one of those decisive fights, where the united forces of the local states defeated the Khorezm army of Djalal al-Din. The latter was keeping in terror the whole region for about six years.

There were two leading forces in the battle of Yerzinka: the Seldjuk sultanate of Iconium and the united forces (Damascus, Aleppo, Homs, Hama, Diyar Mudar, Banyas, Mayyafarikin) of the Ayyubid “confederation”.

The Arab and Syriac historians (Ibn al-Athir, al-Nasawi, Bar Hebraeus et c.) reporting about this battle provide information only on Seldjucs and the Ayyubids as members of the coalition. In that sense the reports of Armenian historians of 13th c. Kirakos Gandzakeci (History of Armenia) and Anonimus of Sebaste (Chronicle) are exceptional. They inform about participation of Armenians and Franks together with the Muslim contingents in the coalition. Though they precise that the number of Armenians and Franks was less than 1000 (in an army of 25.000 soldiers), all the same the fact of participation is important to reveal the nuances of the foreign policy of the Kingdom of Cilicia, especially in a period of time when there are few reports.

We haven't yet found additional evidences confirming the statements of above-mentioned Armenian authors. At the same time a thorough research of the foreign policy of the Armenian kingdom and the analysis of the power balance in the region in 1216-1230 demonstrates the credibility of their reports.

Following the death of sultan Salah al-Din (1193) his empire was divided among his sons and his brother. Northern Syria, with a center in Aleppo, became the possession of his son al-Malik al-Dhahir. He governed as a sovereign ruler and sometimes was called “sultan”. During his governance the relations with Cilician Armenia were tense and even hostile for some years (the war of 1203-1206). But the conditions were completely changed in 1216. After al-Malik al-Dhahir passed away, his infant son came to power under the tutelage of a regent (atabek) – Shihab

al-Din Tughril. Meanwhile the Aleppo emirate itself came under the patronage of Ayyubide rulers of Mosul. In the same period, through the last years of Levon I (1216-1219) certain weakening became apparent in Cilicia, which coincided with an unprecedented strengthening of the sultanate of Iconium and an aggressive behavior of the County of Antiochia-Tripoli. All these changes that took place in the region eventually made Sis and Aleppo natural allies.

One can find at least two eloquent evidences of mutual assistance (with soldiers, weapons or diplomacy) between the Armenian kingdom and the Aleppo emirate. In 1219 Armenians helped the Ayyubids of Aleppo and Mosul confronting the sultanate of Iconium (source: Continuer of Michael the Syrian) while in 1226 it was the turn of Aleppo to help the Armenian kingdom in its struggle against the County of Antiochia-Tripoli and the sultanate of Iconium (source: Ibn al-Athir).

Most probably the battle against the army of Djalal al-Din was another occasion to continue the established cooperation between the two countries. The comparison of the reports of historical sources makes us to think that the Christian soldiers participated in the Yerzinka battle together with the contingents of the Ayyubid army. The latter was four times smaller than the Seldjuks', however it played a decisive role in defeating the huge army of Khorezm. Personal relationship also could contribute to the involvement of the Cilician Armenians in the coalition: in 1230 the *de facto* rulers of both Northern Syria and Cilicia were the regents – Shihab al-Din Tughril and Constantin Bayl, who had already played a role in the establishment of previous alliances and had preserved personal contacts.

Obviously the result of Yerzinka battle in 1230 had a positive impact on Cilicia, as the invasion of the hordes of Djalal al-Din into the flourishing kingdom of Cilicia could be a disaster. On the other hand after the defeat of the Khorezmian army the sultanate of Iconium got rid of serious adversaries and started to extend its influence towards east and south. Under the new circumstances Armenian king Hethum I had to avoid the direct confrontation with the powerful sultanate in the 30s and early 40s of 13th c. and temporarily recognize the supremacy of the sultans of Iconium. At the same time the Cilician Armenians were ready to use any opportunity to get rid of dependency on the northern neighbor. To a large extent it explains the position of the Armenian kingdom towards the battle of Köse-Dagh (Chimankatuk) in 1243 and the subsequent dynamic efforts of the Armenian political elite for the sake of establishing a durable alliance with the Mongols.

